

ԿՐՕՆԱԿԱՆ

ԼՈՒՍՈՅ ՈՐԳԻՔ.

«Ձի քպկս եւ երբեմն եիք խաւար, աղ լոյս եք ի Տէր. իբրեւ զորդիս լուսոյ զնացէի, զի պտուղ լուսոյ ամենայն բարութեամբ եւ աղարարութեամբ եւ ճշմարտութեամբ»:

Եփես. Ե. 8—9:

ԶԿՏՈՒՄԸ, զէպի լոյս մարդու ընդար-
բոյս ունակութիւններէն, նորա հո-
ղու ամենամարուր շարժումներէն մէկն է, ինչպէս որ արեգակի լուսոյ ազդեցութեան ներքոյ դարձնում եւ շարժում են բոյսի մէջ թաղնուած կենսական ոյժերը ստիպում նո-
րան ելնել, տարածուիլ լոյս աշխարհի մէջ, բացուիլ, ծաղիկել եւ պտղաբերել մինչեւ իւր կոչման վերջին ծայրն հասնէ՝ այնպէս եւ մարդս զգում է, որ իւր անհուն յոյզերի եւ անսահման մտքերի սաղմնաբան հոգին բացուել, զարգանալ եւ կատարելութեան հաս-
նել կարող է միայն այն դէպքում, երբ նո-
րա վերայ ընկնում են մի ներքին լուսոյ ճա-
ռագայթները միջոց են տալիս աւելի ու աւելի հեռուն տեսնելու, աւելի ու աւելի պայ-
ծառ կերպով եւ մի անսպառ տենչ նորան մղում է զէպի յաւիտենականութեան այն եզրը, որ համակ լոյս է, եւ խաւար ի նմա չկը եւ ոչ մի *:

Այդ ձգտումը հարկաւ բոլոր ժամանակ-
ներում եւ բոլոր մարդոց մէջ հաւատար կեր-
պով չէ հանդէս գալիս: Եայանի է, թէ որչափ մեծ է եղել այն արեւելեան—արեւմտեան ժողո-
վուրդների մէջ, կրօնն առասպելական եւ ազ-
գային աւանդութիւններ, բերանացի եւ գրա-
ւոր բանահիւստութիւն՝ այն ամէնը ինչ որ այս ժողովուրդների ի շարս նոցա եւ հին հայերի, հոգեւոր կեանքի արտայայտութիւնը կամ հո-
գեական հարստութիւնն է կազմում՝ պտտում է լուսոյ եւ խաւարի յաւիտենական մաքառ-
ման գաղափարի շուրջը, մայրն օրօրօցի մօտ:

* Յովհ. Ա. 5:

քուրմը տաճարում, վիպասանն ու տունդա-
պահ ծերունին հրապարակի վերայ աշխատո՞ւ-
նն արեւելցու հոգու մէջ տպաւորել այն սկզբ-
ունքները, որոնց առաջնորդութեամբ նա լու-
սոյ գործակից պէտք է լինի եւ խաւարը հա-
լածէ, եւ նորա մարդկային արժանեաց չափն իսկ այն է, թէ որպիսի արիւթթիւն է ցոյց տուել լուսոյ զինուորի կոչման մէջ: Սակայն այստեղ լուսոյ գաղափարն աւելի երեւակայու-
թիւնն ու տենչ անուշանոց, կէս—կախարդու-
կան միջոցներով զէպի կախարդական հրաշա-
լիքների մի աշխարհ տանող ցնորք է, քան իրական համոզում արտաքին լուսոյ՝ արեւի ու կրակի արտաբացման, եւ ներքին լուսաւո-
րութեան պատկերացումներն իրար են խառ-
նուում՝ այստեղ եւ անհատն իւր աչքի առ-
ռաջ գծուած մի պայծառ շաւիղ չէ տես-
նում, որի վերայ պարզ գիտակցութեամբ եւ հաստատուն կամքով զէպի իւր կեանքի նպա-
տակը դիմել կարող է, այլ շրջապատուած է զղում իրեն մի անորոշ, մի հմայիչ շտման-
գաղով, որի մէջ ընկղմելու բուռն ցանկու-
թեամբ ինքնամոռացութեան պէտք է տալ, կրաւորական վիճակի մէջ դնել իրեն, գապել ի-
րական աշխարհի հետ կապող կրքերն ու կոս-
մոցողութիւնները—երազէ:

Ձգտումը զէպի լոյս շատ մեծ էր նաեւ արդի եւրոպական լուսաւորութեան առաջ-
նորդ հին յոյների մէջ, որոնք լեւպեոս արեւ-
ելիքից առան լոյսը բաց իրեն գործնական ժողովուրդ՝ արտաքին լուսոյ հրապոյրներին անձնատուր չեղան, յափշտակուած հոյեցող-
ութեան մէջ չթաղուեցին չմնացին, այլ իրենց բոլոր ուշքը դարձրին ներքին լուսոյ գործա-
րանը զօրացնելու վերայ, լուս ըմբռնելով, որ գործունից է կախուած մարդոց լուսաւորու-
թիւնը, իրերի աւելի ու աւելի ընդարձակ սահման իւր տեսողութեան շրջանակի մէջ ամփոփելու եւ նոցա էութեան խորքը թա-
փանցելու կարողութիւնը: Պէտք չի թափանցել վերացական լուսոյ պաշտամունքի տեղ բռնեց այստեղ իմաստասիրութիւնը՝ շրջապատող բը-
նութիւնը, անհուն արեւելեքի, նորա մէջ տեղի ունեցող երեւոյթները քննելու՝ նոցա պաշ-
պանութեան շարժման ու կենդանութեան ընդհանուր օրէնքները գտնելու հետամուտ-

Թիւնը: Եւ յոյն հանձարը շուտով այնչափ յառաջ գնաց այս ասպարիղի վերայ, որ նորան թուում էր, թէ շատ չանցած բոլոր գաղանիքները կլուծուին, ամբողջ տիեզերքի մէջ մոլթ անկիւն չի մնայ, որ չլուսաւորուի նորա մտաւոր տեսողութեան առաջ: Թուում էր թէ մարդու իմացական կարողութիւնը մի ամինայաղթ զօրութիւն է, մի դիւթական բանայի, որ ամէն նիգ խորտակում է, ամէն փակ դուռ բանում: Սակայն երբ առաջին ոգեւորութիւնն անցաւ և հետապօտող աչքը արտաքին կոշտ իրականութիւնից դառնալով մարդու ներքին հոգեւոր կեանքի վերայ կենտրոնացրեց իւր ուշադրութիւնը, խորհրդածել սկսեց, որ այստեղ ուրիշ օրէնքներ կան մարդու բարւօք կենցաղաւարութեան, զարգացման և կառարկութեան համար աւելի կարեւոր, բայց և գրեթէ անմատչելի իւր դատողութեան՝ շփոթուեցաւ, կասկածների ու տարակուսանքի մէջ ընկաւ և ստիպուած էր բացականչել. Այն միայն զիտեմ որ ոչինչ չգիտեմ:

Գորա փոխարէն որպիսի բացարձակ ոգեւորութեամբ և մաքուր հրճուանօք ընդրկեցին առաջին հաւատացեալներն այն չնաշխարհիկ լոյսը, որ Գողգոթայի վերայից, յարուցեալ Փրկչի գերեզմանից ծառայալովից նոցա համար: Դրսից էր դալիս այդ լոյսը արտադրել այգսիսի ինչ երբեք մարդկային հանձարը չպէտք է կարողանաւ, բայց նորա մէջ ոչինչ չկար արտաքին և նիւթական. զուտ հոգեւոր էր նա, հոգւոյ աչքով միայն տեսանելի անարատ և գէպի անապական լուսոյ աղբիւրը ձգող հոգիներին միայն մատչելի: Երկրայնտի կազմութեան, արեւի ու աստղերի շարժման գաղանիքը նա չէր պարզում՝ բնութեան տարբերի վերայ իշխող լինելու այն անձնատաստան զգացումը չէր շնորհում որով պարծենալ կարող էր լուսաւորեալ յոյնը, բայց դրա փոխարէն որչափ խոր գաղանիքներ էր պարզում մարդու հոգեւոր կեանքի մէջ, որպիսի մեծ կարողութիւն շնորհում նաեւ մի խեղճ աղէտ մարդու իւր սեփական կրքերի ամենափոքր շարժումները դիտելու և նոցա վերայ իշխող հանդիսանալու՝ անձնիշխանութեան մի նոր օրինակ զգացում, որ չէր ամբար-

տաւանացնում, այլ մահու չափ խոնարհեցնում էր՝ մինչև երկինք բարձրանալու երջանիկ վատահութեամբ: Մարդիկ մինչ այդ զգացել էին միշտ մի աներևոյթ չար զօրութեան բռնակալ ձեռքի ծանրութիւնն իրենց վերայ, որի դէմ հաւասարապէս ապարդիւն կերպով կռուել էին աշխատել արեւելցին ու յոյնը և իրենց ապկարութիւնը խոստովանել. իսկ այժմ՝ մի բարի մի ամենակալ Հօր աջը տարածուել, հովանի էր կազմում տառապեալ մարդկութեան և իւրաքանչիւր որ, որ լի հաւատով գէպի այդ Երկնաւոր Հայրն էր դարձնում հայեացքը՝ պէտք է ապահով լինէր, որ առանց Ծորա կամքի մի մազ անգամ չի ընկնի իւր գլխից, և ուրեմն Ծորան ապաւինած կրակ ու ջուր, իժ ու կարիճ կոխել, տնցնել կարող է: Առաջ այն կարծիքն էր տիրում, թէ աշխարհը անիրաւութիւնների մի զանգուած է և զօրեղն է այնտեղ իրաւատէրը բարին պատժուում է յաճախ և չարը վարձատրուում, տնանկն ու հարստահարեալը զուր են պաշտպանութիւն և արդարութիւն որոնում: Իսկ այժմ՝ խաչի մահուան դատապարտուած անմահ Թաչեցեալն ազազուցել էր, որ եթէ դժոխքի ամբողջ արհաւիրքն անգամ արդարի հակառակ ելնեն՝ նա վհատելու պատճառ չունի և չպէտք է ընկճուի, համոզուած լինելով, որ տիեզերքի երկայնամիտ Դատաւորը արդարութիւնը տեսնում է, իւր անքննելի տնօրինութեամբ կլու գուցէ երկար ժամանակ, բայց ի վերջոյ արդարին կպարզէ, յաղթութիւնը: — Ի՞նչ է ճշմարտութիւնը՝ երկնքից կախուած այդ մեծ հարցը զարեւի ընթացքում պատասխան չէր գտնում: զուր տեղը մոգերն ու իմաստունները երկնքի ու երկրի երեսն էին քննում, ծովերի խորքում՝ գտնել այն ճշմունք: Գնահատութիւն չկար ոչ մի տեղ, կասկած էր յարուցանում միայն անշունչ բնութիւնը, կեղծիք արտադրում մարդոց փոխադարձ յարարելութիւնը, բայց ահա ասպարէզ են ելնում ճշմարտութեան մի խումբ աւետարանիչներ, որոնց համար ամէն կասկած փարատուած է և ամէն կեղծիք վերացած, նորա տեսան ճշմարտութիւնը և հրաւիրում են ամէնքին դալ և տեսնել, որովհետեւ ոչ ոքից լծադուն չէ, նա՝ վաղուց փայլում է

հորիզոնի վերայ և մարդու կրծքի տակ խօսում և եթէ մարդիկ տեսնել ու լսել չեն ուզում, պատճառն այն է միայն որ «չարութեան են գործք իւրեանց» չար հակումներ, չար գործեր փակում ու խանգարում են նոցա տեսողութիւնը:

Եւ մարդիկ զգում են այդ, զգում են, որ իրենք դէպի ճշմարտութիւն կոչուած են և հասնել կարող են նորան, եթէ հոգեով սրտով հետամուտ լինին. զգում են, որ լուսով շրջապատուած են և կարող են լուսոյ մէջ քայլել շարունակ, եթէ վայր ձգեն թանձր փականքները աչքի վերայից, որ խաւարը սիրելի են դարձնում: Դեռ Բ. դարում նշանաւոր Տրայանոս կայսրը իւր գործակալ Պիլոնիոսին զրաժ նամակի մէջ քրիստոնեաների մասին ասում էր. այս լուսաւորեալ ժամանակ մեզ վայել չէ բանաստեղծների միջոցաւ նոցա որոնել և դատի ենթարկել: «Վայել չէ լուսաւորեալին, մեր լուսաւորեալ դարում» — այսպիսի խօսքեր մենք ևս յաճախ լսում ենք և կրկնում այն զիտակցութեամբ, որ լուսոյ որդիք լինելու և կոչուելու համար ազատ պէտք է լինել որոշ արատներից, մարդկային արժանապատուութիւնը ձգող խաւարային միտումներից և սովորութիւններից: Սակայն ամէն օր ամէն ժամ մեր աչքի առաջ տեղի են ունենում իրողութիւններ, որոնք ապացուցանում են, թէ ներկայումս քաղաքակրթութիւնը աշխարհի պարծանք կազմող լուսաւորութիւնը չէ ազատում մարդուն այդ արատներից: Ծա բարձրագոյն ճառեր է ասում լուսաւորութեան մասին հազար ու մի եղանակներով ազատարար ու երջանկաբեր լուսոյ գովքն է անում: Բայց շարունակում է խաւարային գործեր և խաւարային բարքեր երեւան հանել: Այստեղ ևս նա զիտէ ձորպիկ կերպով ամէն բան իւր հաճոյքին յարմարեցնել՝ այն բարձր, որին պէտք է վեր մագլցելով հասնել ձգտել, իջեցնել, գետնի վերայ քաշ տալ, իւր մօտ բերել: 2^է որ նա պարծենում է, 2^ի որ նա պարծենում է, թէ լուսաւորութիւնն էլ ինքն է ստեղծել, իւր հանձարեղ մտքի ծնունդ են ոչ միայն զիտութիւն և արուեստ, այլ և կրօն, բարոյականութիւն, ամէն մի վսեմ ու ազնիւ գա-

ղափար: Ի՞նչ զարմանք ուրեմն, որ նա իւր քմայ համաձայն բացատրութիւն տայ դոցա բոլորին՝ գործադրել, ինչպէս անձնիշխան կամքը պահանջում է: Բայց եթէ, մենք ճանաչում ենք մի լոյս, որ վերեւից է, զայիս և մեր առաջնորդը պէտք է լինի դէպի վեր՝ չենք կարող լինել և գործել այնպէս, որ ամաչենք և երկիւղ կրենք այդ լուսոյ առաջ երեւալու: Առաքեալը մեղ ասում է՝ ի՞նչ պայմանների մէջ ճշմարիտ լուսոյ որդիք կրկոչուենք, ինչպէս պէտք է լինեն այդ լուսով լուսաւորեալի պատեղները՝ բարութեամբ, արդարութեամբ, ճշմարտութեամբ: Եւ դոքա պակասում են՝ ամենամեծ զիտութիւնն ու ամենաճարտար արուեստը՝ ճշմարտապէս լուսաւորեալ մեզ դարձնել չեն կարող: Որ ասե՛ք եթէ, ի լոյսն իցէ, և զեղբայր իւր ատիցէ՛ սո՛ւա է և ի խաւարի է տակաւին:

Կ. Վ.



ԱՐԵՒՄՏԵԱՆ ԿԱՄ ԿԱԹՈՒԼԻԿ ՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ *.

ՈՐՔԱՆ և քրիստոնէական եկեղեցիները դաւանութեամբ և վանական կազմակերպութեամբ սարբեր լինին, այնուամենայնիւ այն հայեցակէտը ունին, թէ հաւատքը ամենուրեք քրիստոնէական կեանքում պէտք է իրականաց և պատկերանայ, թէ իսկական քրիստոնէութիւն կարող է մի միայն այնտեղ գոյութիւն ունենալ, ուր նա իւր համար «Եղհակն Էլան» է ստեղծել: Քրիստոնէական եկեղեցիների բաժանումը յաւաջ է եկել ոչ միայն աստուածաբանական վիճարանութեանց,

* Անցեալ օտի «Արարաս»-ում լոյս տեսած Օրբոյոս կամ արեւելեան վանականութեան պատմութեան իրեւզագիշտ յառաջ եմք թերում հռչակաւոր ուսուցչապետ Աղոյժ Հարմակի գրութիւններէն յոյսադրութիւնը: Նորա դասախօսութիւնը կրում է Das Mönchthum, Seine Ideale & seine Geschichte վերնագիրը: Մեմ օգտուեմ եմք այդ գրութեմի 4-րդ հրատարակութիւնից (gütsel. 1895): Այս յօդուածին կնեւելի ասորի վանականութեան պատմութիւնը և այսպէս հայ վանականութիւնը: